
ՄՐԵՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՎԱՐՊԵՏԱՆՇԱՆՆԵՐԸ
ԵՎ ՈՐՈՇ ՎԻՄԱԳՐԵՐ

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ, ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մրենի Կաթողիկե եկեղեցին հայկական միջնադարյան ճարտարապետության և, ընդհանրապես, համաշխարհային քրիստոնեական մշակույթի կարևորագույն հուշարձաններից է: Այն կառուցվել է 639 թ. Ախուրյանի աջ ափին, հնագույն Մրեն բնակավայրի կենտրոնում, համեմատաբար հարթ տարածքում գերիշխող դիրքով, հարավում՝ Արարատ լեռան, իսկ արևելքում՝ Արագածի ու Արտին սարի բնապատկերով, գեղատեսիլ և խորհրդավոր վայրում: Կարելի է հիշատակել սակավաթիվ հին շինություններ, որոնք Մրենի տաճարի նման բազմակողմանի արժեք են ներկայացնում թե՛ ճարտարապետական, թե՛ քանդակի ու որմնանկարչական, թե՛ պատմական և հնագրական ժառանգության առումով: Այս հսկա՝ 17,65 , 22,17 մ արտաքին չափեր ունեցող քառամույթ խաչագմբեթ եկեղեցին հայ մշակույթը հետազոտողների ուշադրությունը գրավել է XIX դարի երկրորդ կեսին և անցյալ դարի սկզբին՝

1920 թ. Կարսի մարզի հետ Մրենն անցավ Թուրքիային, որից հետո արդեն գրեթե մեկ հարյուրամյակ այն գտնվում է այցելությունների համար խստորեն արգելված սահմանամերձ գոտում և մատնված է անուշադրության ու քայքայման: Եկեղեցու պատերի ու մույթերի ստորին շարքերը, հավանաբար, 1950–1960-ականներին չարամտորեն քանդվել են՝ կառույցը փլուզման հասցնելու նպատակով: Այս բարբարոսական քայլի հետևանքով տաճարի հարավային պատը երկու փուլով քանդվել է, ընդ որում՝ վերջին ավերածությունը, կարելի է ասել, տեղի է ունեցել մեր աչքի առաջ՝ 2008 թ. (նկ. 1): Այդ պահից սկսած՝ հուշարձանի վթարային վիճակի մասին բազմիցս տեղեկանքներ են գիտնականները՝ շեշտելով կառույցի բացառիկ արժեքը: Առանձնակի դրվատանքի է արժանի մեր ամերիկացի

¹ Ն. Սարգիսեան. *Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 194–200*, Н. Марр. Новые материалы по армянской эпиграфике, Ани–Аламан–Мрен–Багаран–Ервандакерт–В. Талын. СПб., 1893, с. 81–90; И. А. Орбели. Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII века.– И. А. Орбели. Избранные труды. Ереван, 1963, с. 395–401 (первое изд.: Христианский Восток, т. 2, вып. 1. СПб., 1913/14, с. 105–142, с. 132–138); S t r z y g o w s k i. Die Baukunst, 1918. S. 182–184, 278–279, 429–431, 506–508; Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. ժողովածու, Երևան, 1942, էջ 191, 295–296, նույնի՝ Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 187–191. Н. Токарский. Архитектура древней Армении. Ереван, 1946, с. 62–67 և այլն:

գործընկեր Քրիստինա Մարանչիի դիմումը Հուշարձանների համաշխարհային հիմնադրամին (World Monuments Fund), և վերջինիս կողմից 2014 թ. Մրենի տաճարի ներառումը, այսպես կոչված, «Դիտման ցուցակի» մեջ²:

Վերջերս միջազգային երկու գիտարշավ է կազմակերպվել Մրենում առաջինը՝ 2013 թ. սեպտեմբերին, երբ «Անին կոնստրուկտում» ծրագրի շրջանակում կարճատև այցելություն է կատարվել հուշարձան³, իսկ երկրորդը՝ 2015-ի հունիսին, կազմակերպվել է հատուկ եկեղեցու վիճակի գնահատման ու քանդման սպառնալիքի դեմ միջոցներ առաջարկելու նպատակով⁴: Այս գիտարշավը, հիմնական նպատակին զուգահեռ, հնարավորություն է բնօրինակ լուսանկարչական ու չափագրական ծավալուն նյութ հավաքելու, որի մի մասը ներկայացվում է ստորև:

Անկասկած, վերջին տարիներին Մրենի տաճարի հետազոտման նոր փուլ է սկսվել: Տասնամյակներ շարունակ հուշարձանի վերաբերյալ հիմնականում հին նյութերի օգտագործմամբ՝ գրասենյակային աշխատանքով ստեղծված աշխատություններին⁵ փոխարի-

² <http://www.wmf.org/watch/project-map>.

³ Ani in Context Workshop (September 28 – October 5, 2013, Kars, Turkey), New York: World Monuments Fund, 2014. *Գիտարշավի նախաձեռնողն էր Մշակույթի ժառանգության հետազոտությունների նորվեգական ինստիտուտը՝ NIKU.*

⁴ *Գիտարշավի նախաձեռնող՝ World Monuments Fund. Երկու գիտարշավն էլ կայացել են «Anadolu kültür» կազմակերպության և Յալուզ Օզկայայի հիմնարկության ներդրման շնորհիվ: Առաջին գիտարշավին մասնակցել են սույն հոդվածի հեղինակները, երկրորդին՝ Արմեն Ղազարյանը:*

⁵ *Դրանցից հիմնականներն են. Մ. Խ. Մնացականյան. Հայկական ճարտարապետությունը VI դարի երկրորդ կեսից մինչև VII դարի վերջը, Երևան, 1964, էջ 151–152, Մ. Ս. Մարգարյան. Մրենի տաճարի հիմնադրանքի բարձրաքանակ պատկերները. – ՊԲՀ, 1966, -4, էջ 241–250, С. А. Ма и л о в. К проблеме формы в раннесредневековой архитектуре Армении. – § Проблемы формообразования в архитектуре народов СССР/, под ред. О. Х. Халпахчыана. М., 1982, с. 22, рис. 46; С. А. Ма и л о в. Некоторые особенности крестово-купольных церквей раннесредневековой Армении. – § Архитектурное наследство. М., 1985, 1 33, с. 238, рис. 1е, 8 (аксонометрический разрез), 9а (аксонометрия); М. А. L a l a С о m n e n o. Mren. – in: P. Cuneo, Architettura Armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988, n. 408, p. 632–635; С. Х. М н а ц а к а н я н. Крестовокупольные композиции Армении и Византии V–VII веков. Ереван, 1989, с. 110–118; М. А с р а т я н. Армянская архитектура раннего христианства. М., 2000, с. 34, 158, 350; С h. M a r a n c i. Building Churches in Armenia: Art at the Borders of Empire and the Edge of the Canon, The Art Bulletin, 2006, n. 4, pp. 656–675; P. D o n a b é d i a n. L'âge d'or de l'architecture arménienne VIIe siècle, Marseille: Parenthèses, 2008, p. 108–110, fig. 163–169; А. Ю. К а з а р я н. Церковная архитектура стран Закавказья VII века: формирование и развитие традиции, т. 2. М., 2012, с. 35–42, 164–183. *Բացառություն են կազմում. N. et M. T h e i r r y. Notes sur des monuments arméniens en Turquie, Revue des études arméniennes, II, 1965, p. 161–173; M. et N. Thierry, La cathédrale de Mren et sa décoration, Cahiers archéologiques, t. 21, 1971, p. 43–77; T. Scalesse. La cattedrale di Mren in Armenia, Corsi di cultura sull'arte ravennate e bizantina, XX, Ravenna, 1973, p. 383–396.**

ներում են գալիս կառույցը տեղում ուսումնասիրելու միջոցով ձեռք բերված նյութերի վրա հիմնվող ուսումնասիրություններ⁶:

Շինարարական առանձնահատկություններ

Հայտնի է, որ Մրենի տաճարի կառուցման տարիները պատմականորեն համընկնում են արևելաքրիստոնեական աշխարհում, և, հատկապես Հայաստանում հոգևոր կյանքի վերելքի շրջանի հետ, որը պայմանավորված էր բյուզանդական Հերակլ կայսեր (610–641)՝ պարսիկների նկատմամբ տարած հաղթանակի և Քրիստոսի խաչափայտի՝ գերությունից ազատելու խոշոր իրադարձությամբ: Բյուզանդիայի կողմից հաստատված Հայոց իշխան Դավիթ Սահառունու և Կամսարականների նախաձեռնությամբ Մրենում մեծ եկեղեցու կառուցումը, ըստ նրա հյուսիսային մուտքի բարավորի բարձրաքանդակի մեկնաբանման⁷, կապված էր հենց Քրիստոսի խաչափայտի վերադարձի պատմության հետ:

Մրենի եկեղեցին VII դարի 30-ական թվականներին կառուցված քառամույթ խաչագմբեթ շինությունների շարքում կարևորագույններից է և համարժեք Բագավանի Սուրբ Հովհաննես (631–639) ու Վաղարշապատի Սուրբ Գայանե (630) տաճարներին (նկ. 2): Այդ տասնամյակն առաջինն էր հայկական տաճարաշինության պատմության մեջ, երբ միաժամանակ կառուցվում էին մի շարք խոշոր և միջին չափերի տաճարներ: Վերջինների թվում են ոչ պակաս կարևոր Այսնանի (637) և Ագարակի խաչաձև եկեղեցիները: Այս վիճակը շարունակվում է հաջորդ տասնամյակներին՝ հիմք հանդիսանալով ճարտարապետության հետագա աննախադեպ վերելքի համար⁸: Մոնումենտալ շինությունների զանգվածային կառուցումն այս շրջանում նպաստել է նաև շինարարական գործի կազմակերպման ու քարգործ վարպետների արհեստի բուռն զարգացմանը:

Ժամանակակից ճարտարապետներին հիացմունք է պատճառում Մրենի տաճարի հսկա, ու զարմանալիորեն բարձր հորինվածքի միասնական և կուռ կոնստրուկտիվ համակարգը (նկ. 3): Իր ծավալատարածական ու շինարարական հատկությունների շնորհիվ Մրենի տաճարը դարեր շարունակ դիմացել է բազմաթիվ երկրաշարժերի հարվածներին: Չարմանալի է այսօր արդեն կիսավեր վիճակում գտնվող կառույցի հիմնական

⁶ Ս. Կարապետյան. Մրենը և նրա հուշարձանները.– «Վարձք», 2012, թիվ 7, էջ 31–63, С. Maranci. New Observations on the Frescoes at Mren.– “Revue des études Arméniennes”, Paris, t. 35, 2013, pp. 206–224; С. Maranci. Holiness Befits Your House (Ps. 92 [93]: 5): A Preliminary Report on the Apse Inscription at Mren.– “Revue des études Arméniennes”, Paris, t. 36, 2014–2015, pp. 237–259.

⁷ M. et N. Thierry. La cathédrale de Mrèn..., p. 64–67; С. Maranci. The Humble Heraclius: Revisiting the North Portal at Mren.– “Revue des études Arméniennes”, t. 31, 2009, pp. 359–372.

⁸ Պատահական չէ հայ ճարտարապետության ոսկեդարի սկիզբը հենց 630-ականները համարելու առաջարկը (P. Donabadian. Նշվ. աշխ.), թեև այդ գաղափարը ակամա ժխտում է նախորդ տասնամյակներին ստեղծած ոսկեդարը «բացող» հուշարձանների նշանակությունը:

մասի հավասարակշռությունը՝ առանց հարավկողմյան պատի ու թաղերի, բազմաթիվ ճաքերի առկայությամբ, արևմտյան որմի և մույթերի շարվածքի զգալի կորստով:

Հավասարակշռության պահպանման պատճառներից մեկը, անկասկած, տաճարի «մարմնի» հստակ և տրամաբանական ճարտարապետական լուծման մեջ է, մյուսը՝ շինարարական առանձնահատկությունների և հատկապես շարվածքի բարեխիղճ կատարման, օգտագործված շաղախի բացառիկ ամրության և, ըստ երևույթին, առաձգականության մեջ: Վերջին նկատառումը գուցե հայեցողական է. այն լաբորատոր հատուկ հետազոտություն է պահանջում:

Հավասարակշռությունը կարող է կապված լինել նաև հուշարձանի մեկ այլ հատկության՝ հատակի հիմքի անսովոր լուծման հետ: Այն ներկայացնում է հզոր, առնվազն 0,5 մ հաստությամբ կրաշաղախային լիցք: Դա նման է համասեռ, ընդ որում, նյութից եզրակացնելով՝ բավական առաձգական պլաստֆորմի, որը, հավանաբար, իր դերն է խաղում սեյսմակայունության հարցում (նկ. 4): Խորանի կողմում՝ անմիջապես այդ լիցքի տակ, գտնվում է մեմորիալ նշանակություն ունեցող թաղակապ սենյակը (կրիպտա): Այն ձգված է արևելյան խաչաթևի տարածքից դեպի նախախորանի գոտին, ունի մեծաչափ՝ 5,70 , 3,20 մ ուղղանկյուն հատակագիծ, մուտքը արևմտյան կողմից է, խորանի բեմին մոտ:

Մրենի տաճարի խաչագմբեթ կառուցվածքում առանձնակի դեր է խաղում կենտրոնական չորս մույթերով կազմված գմբեթատակ քառակուսին, որի վերևում բարձրանում է գմբեթային կառույցը՝ կաթողիկեն (ներքին լայնությունը հյուսիս-հարավ ուղղությամբ՝ 6,71 մ): VII դարի սկզբի հայ ճարտարապետության մեջ իր տեղը գտած ավանդությանը համապատասխան՝ Մրենի Կաթողիկեն ունի բարձր թմբուկ, որի նիստերի պատերի մեջ է հանգչում գմբեթի վեղարի ճնշման ուժը (նկ. 5):

Գմբեթին լրացուցիչ կայունություն է հաղորդում նրա ձվաձևությունը, որը հազիվ է երևում թմբուկի լուսամուտների բացվածքներից նայելիս, բայց հստակ է չափագրական գծագրի վրա: Կայունությանն է ծառայում նաև թմբուկի բարձրությունը, որի վերին մասի քաշը հորիզոնական հզոր ուժ է հաղորդում գմբեթի հիմքին: Այդ ուժի և ճնշման ուղղությունը մոտենում է ուղղաձգության, ինչը հնարավորություն է տալիս այն մարել ու թմբուկի պատերի շրջանակում: Հենց դա է պատճառը, որ հայկական գմբեթները կայուն են մնում նույնիսկ քանդված խաչաթևերի թաղերի պայմաններում (իհարկե, երկրաշարժի դինամիկ ազդեցության բացակայության ժամանակ):

Պարզ, լակոնիկ ծավալներ, սակավաթիվ բացվածքներ ու համեստ հարդարանք ունեցող այս տաճարի կերպարում առավել ազդեցիկ է շարվածքի գեղագիտական դերը: Մեծաչափ, հորիզոնական ձգվածությամբ կարմրավուն ու գորշ տուֆից կազմված շարվածքն աչքի է ընկնում արտակարգ կանոնավոր շարքերով: Բավական է նշել, որ 10 շարք առանց ընդհատվելու և աստամ տալու պտտվում են հսկա թմբուկի արտաքին մակերեսով (նկ. 6): Հիմնական պատերի ու խաչաթևերի շարքերի մեծ մասը պտտվում են պատերով կանոնավոր կերպով անցնելով լուսամուտների կողային մակերեսներին ու դեպի տաճա-

րի ներսը: Նման կերպ է կազմավորված նաև պատերի ներքին մակերեսների, ինչպես նաև մույթերի շարվածքը: Դա դարաշրջանի շինարվեստի բնորոշ հատկանիշն էր, որը հանդիպում է մասնավորապես, Բագավանի, Մաստարայի, Ալամանի, Ագարակի և 630–640-ական թվականների այլ եկեղեցիներում: Այս հուշարձանների հետ Մրենի շարվածքը համընկնում է նաև այլ հատկանիշներով: Քարերը բավական նեղ են, ինչը երևում է տաճարի անկյուններում. բլոկների մի կողմը երկար է, մյուս նիստը՝ կարճ, միջինը 20–25 սմ: Հուշարձանի քարերի արտաքին մակերեսները տաշված են խնամքով ու երկրաչափորեն ճշգրիտ, սակայն հղկված չեն և ունեն գործիքների հետքեր, որոնք թույլ են տալիս հետազոտել վարպետների ձեռագիրն ու աշխատաձևը: Ցավոք, այդ ուղղությամբ առայժմ ուսումնասիրություններ չեն արվել:

Ուշագրավ է շարվածքի մի հատկությունը, որը հազվադեպ է հանդիպում և, կարելի է ենթադրել, որ Հայաստանում առաջին անգամ կիրառվել է հենց Մրենում, թեև այն հայտնի է ուշ հռոմեական ու բյուզանդական շինարվեստում: Խոսքը տախտակամածի ամրացման նպատակով շարքերում փոքր անցքեր թողնելու մասին է: Քարե շարվածքի դեպքում նման հնարքի կիրառումը ստիպել է Մրենի տաճարը կառուցողներին քարերի անկյուններում քառակուսի աստամնանման փորվածք տաշել՝ նրա մեջ փայտի հենակ (հեծան) տեղադրելու համար: Աշխատանքի վերջում այդ հեծանները հանվել են, և անցքերը փակվել քարե քառակուսի կցոններով (փոքր խորանարդներով): Վաղարշապատի Սուրբ Գայանե եկեղեցում, Արուճի ու Պտղնիի տաճարներում մի քիչ ավելի մեծ անցքեր են թողնվել թաղերի ստորին շարքերում՝ դրանցում ժամանակավորապես գերաններ տեղադրելու նպատակով: Մրենի թաղերի իրականացման համար նման եղանակ չի օգտագործվել, սակայն թաղերի հիմքում համատարած կիրառված է մեկական նեղ շարք, կրկնակի կամ եռակի նեղ՝ ստանդարտ շարքերի հետ համեմատած: Դրանցում հնարավոր էր տեղադրել համապատասխան գերանների պոչերը: Փաստորեն, Մրենում աշխատած քարգործ վարպետները կիրառել են աստամ տալու ու հետագա կցոնման մեթոդը՝ միայն իրենց աշխատանքին անհրաժեշտ տախտակամածները պատին հուսալիորեն ամրացնելու համար (նկ. 7):

Փոքր կցոնումներ հանդիպում ենք պատերի ներքին և արտաքին մակերեսների տարբեր մասերում: Առաջին հայացքից անկանոն այդ դասավորության մեջ առանձնանում են որոշ շարքերով անցնող կցոնումները: Կարելի է նկատել դրանց կուտակվածությունը եկեղեցու ճակատների ստորին (միայն արևմտյան ճակատում), միջին և քիվատակ գոտիներում, խաչաթևերի միջին բարձրության վրա, ինչպես նաև թմբուկի արտաքին, միջին շարքերում և ներքուստ՝ փոքր տրոմպների տակ: Որպես կանոն, աստամն ու կցոնումը արվել են քարաբեկորի վերին անկյուններից մեկում, հազվադեպ է հանդիպում տակի անկյան կցոնումը (սակայն այդպիսի բան հանդիպում է Մաստարայի թմբուկի վերնից երկրորդ ու երրորդ շարքերում), և ընդամենը մի տեղ է նկատելի քարի միջին մասի քա-

ուսուցիչի ձև ունեցող ծակի կցոնումը (հավանաբար, հենց այս տեղում է անհրաժեշտ եղել հեծանի տեղադրումը):

Մրենի գմբեթը մասամբ պահպանել է VII դարի կղմինդրյա ծածկը՝ կազմված թրծած կավե սալիկներից ու դրանց միջև կարերը փակող կիսազլանային մասերից: Պահպանված հատվածը զբաղեցնում է ութանիստ բրգաձև վեղարի հյուսիսային կողմի նիստերը: Բարձր դիրքի պատճառով՝ վեղարն անմատչելի է ուսումնասիրության համար: Խաչաթևերի վրայից կարելի է նկատել առաջին շարքի կիսազլանների ճակատային նիստի վրա ծեփման եղանակով կատարած զարդանախշերը (նկ. 8): Դրանցից մեկում, ըստ երևույթին, պատկերված է հրեշտակ:

Սկզբնապես կղմինդրե ծածկույթ են ունեցել նաև տաճարի հիմնական ծավալի լանջերը: Դրանք քայքայվել են դեռևս միջնադարում, ինչի պատճառով փոխարինվել են քարե ծածկույթով: Որոշ փոփոխություններով նոր կոնստրուկցիան կրկնում էր հին եղանակը. նեղ, կտրվածքում T-աձև, կլորեցված արտաքին կողերով փականները շաղախի օգնությամբ ամրացվում էին հարթ սալերի ուղղաձիգ շարանների միջև: Այս բավական հնավանդ տարբերակը վկայում է տանիքների նորոգման վաղ, հավանորեն, Բագրատունյաց շրջանում կատարված լինելու մասին:

Մրենի տաճարի քարե տանիքը պատրաստող վարպետներն աշխատել են կղմինդրյա ծածկույթի վրա՝ նախապես վերացնելով անհարթությունն ներկայացնող հին տանիքի գրեթե բոլոր սալերն ու կիսազլանները: Տանիքի կտրված հատվածներում պարզորոշ երևում են տարբեր ժամանակների շերտերը: Առաջինի կրաբետոնե հիմնասալը բարակ է՝ 5–10 սմ հաստությամբ, իրականացված է խիտ և չոր եղանակով շարված խիբարի վրա: Մրա վրա շաղախով հավաքված է եղել կղմինդրյա ծածկույթը: Երկրորդ շերտը մասամբ կատարված է անմիջապես առաջինի վրա և իր մեջ կղմինդրների փշրանք է պարունակում: Սակայն որոշ տեղերում, հիմնականում լանջերի գագաթների մոտ, այն իրականացվել է լրացուցիչ խիբարի շերտի վրա՝ նպատակ ունենալով ավելացնել լանջերի թեթությունը (նկ. 9):

Վարպետանշաններ

Տաճարի քարերի արտաքին երեսների վրա առկա են վարպետանշաններ. տարբեր չափերի երկրաչափական ձևեր, տառեր, մոնոգրամներ (կցագրեր)՝ կատարված սուր գործիքով, արագ նշահարման կամ մանրազնին կերտման եղանակով (նկ. 10 ա, բ, գ):

Հայկական կառույցների վարպետանշանների ուսումնասիրությունը մեկ դարի պատմություն ունի⁹: Սակայն միայն վերջերս է հաջողվել դրանց համահավաքը ստեղծել VII -

⁹ Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, էջ 267–269, նույնի՝ Ջվարթնոց, Գագկաշեն, Երևան, 1984, էջ 52–57:

դարի սահմաններում¹⁰: Ի դեպ, Մրենը միակ խոշոր հուշարձանն էր, որն անհասանելի էր վարպետանշանների հետազոտման տեսանկյունից: Այժմ մեր գիտելիքներն անհամեմատ ընդարձակվել են, հայտնի են նշանագրերի 50-ից ավելի ձևեր: Մրենն իր դարաշրջանի եզակի հուշարձանների թվին է պատկանում, որոնց պատերին այդքան շատ ու բազմապիսի վարպետանշաններ են պահպանվել: Որոշ հատվածներում դրանք առկա են բոլոր քարերի վրա:

Մրենի նշանները լիովին համապատասխանում են VII դարի այլ կառույցների վարպետանշաններին, իսկ նմանություններն առավել շատ են դարի 30–40-ական թվականներին ստեղծված տաճարների՝ հատկապես Վաղարշապատի Սուրբ Գայանեի, Մաստարայի Սուրբ Հովհաննեսի, Արծվաբերի, Զվարթնոցի տաճարի, Ալամանի, Ագարակի, Շենիկի եկեղեցիների հետ: Նշանների մեծ մասը ներկայացնում են հայկական տառեր (հավանաբար, անունների առաջին տառերն են) և խորհրդանիշեր ներկայացնող երկրաչափական պարզ ձևեր: Վերջինների թվում են թե՛ կոմպակտ, հնուց հայտնի խաչերի, աստղերի, սլաքների տարբերակումները, թե՛ մեծաչափ, աղեղներից կազմված հորինվածքները:

Հիմնականում Ա և Բ տառերից կազմված մոնոգրամը գրչությամբ մոտ է Շենիկ գյուղի նույն ժամանակի եկեղեցու խորանի լուսամուտի պսակի քարերին գտնվող ավելի բարդ կազմությամբ մոնոգրամներին (կարդացվում է «Մարգար» կամ «Արգամ»¹¹): Ենթադրաբար, «Արգամ» է կարդացվում տառերի մեկ այլ միակցությամբ կազմված վարպետի նշանը՝ հայտնաբերված 660–70-ական թվականներին կառուցված Արուճի պալատում¹²: Բարդ միակցության տարբեր ձևեր են հանդիպում նաև Միսավանի 670-ական թվականների տաճարում, մոտավորապես նույն ժամանակվա Պեմզաշենի գմբեթավոր եկեղեցում և այլուր¹³: Թեև այս տիպի նշանները ձևերով տարբեր են, բայց նշանագրերի գաղափարի ու տառարվեստի ոճական առանձնահատկություններով միմյանց մոտ են:

Նույն տասնամյակներում տարածում էին ստացել բարդ նշանագրերի այլ տեսակներ՝ բաղկացած երկրաչափական տարբեր ձևերից կամ դրանց ու տառերի միացումներից:

¹⁰ Ներկայացված է երկու գրքերում. А. Ю. Казарян. Автографы мастеров-каменщиков на монументальных зданиях VII в. в Армении, Иберии и Кавказской Албании. М., 2012, ил. 1–4; А. Ю. Казарян. Церковная архитектура..., т. 2, рис. 373, с. 24–27.

¹¹ Վ. Գրիգորյան. Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 37, տախտ. XVIII, 51, М. Асратян. Армянская архитектура..., с. 23: Շենիկի հուշարձանի մասին վերջին հետազոտությունը տե՛ս А. Казарян. Церковная архитектура..., т. 2, с. 238–248.

¹² Կ. Մաթևոսյան. Արուճ, Երևան, 1987, էջ 72, գծ. 8 (էստամպած): Նույն նշանը հայտնաբերվել էր նաև համաժամանակյա Արուճի տաճարում (տե՛ս նույն տեղում, էջ 72), Ստ. Մնացականյան. Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հարցերը և քարագործ վարպետների նշանագրերը. – ՊԲՀ, 1959, -3, էջ 102:

¹³ Համեմատության նպատակով օգտվել ենք նշանների ընդհանուր աղյուսակից. А. Ю. Казарян. Автографы мастеров-каменщиков..., рис. 1–4; А. Ю. Казарян. Церковная архитектура..., т. 2, рис. 373.

Մրենում, ինչպես նաև միաժամանակյա Վաղարշապատի Սուրբ Գայանե եկեղեցում առաջին անգամ ներկայացված են տարբեր մեծ աղեղների և աստղի, սվաստիկայի կամ տառի համատեղություններ մի քարի մակերեսում: Դրանց նախորդում են միայն Բագարանի Սուրբ Թեոդորոսի (624–631) երկրաչափական միակցությունները: Մրենի պատերին առանձնանում է մի նշան՝ հունական «Ա» տառի և խաչի միաձուլման եղանակով ստացած:

Նշանները պատերից արտանկարելիս համոզվեցինք, որ դրանց կատարման ժամանակ ճշգրիտ չափ ու ձև չի պահպանվել, ինչն անհիմաստ է դարձնում նշանագրերի պատճենահանումը:

Հետաքրքրական էր նշանագրերի կիրառման տեղերի բացահայտումը՝ ըստ պատերի հատվածների: Միասնական աղյուսակում այդ արդյունքների ամփոփումը հնարավորություն է ընձեռում բացահայտելու վարպետների խմբերը: Աղյուսակն իրենից նոր փորձ է ներկայացնում պարզելու, թե որ վարպետը որքանով է ակտիվ հանդիսացել եկեղեցու տարբեր մասերում: Ավելացնենք, որ թաղերի և գմբեթի մակերեսների հետազոտությունը տեխնիկական դժվարությունների պատճառով ամբողջականորեն չիրականացավ, ուստի այն չենք ներկայացնում (նկ. 11):

Նաև անհրաժեշտ է նշել, որ կառույցի տարբեր ճակատներում և ներքուստ՝ տարբեր մասերում, ամենաշատը հանդիպող վարպետանշաններն են (նկ. 12):

Այս վերջին եզրակացությունը մեկ աղյուսակում միայն մասամբ է երևում, իսկ հիմնականում հենվում է տեղում և լուսանկարներից ստացած տեսողական տպավորությունների վրա: Այդ և մի քանի ուրիշ նշանների տակ հայտնի 10–15 քարտաշ ու շարող վարպետները Մրենի հինգ տասնյակ շինարարների կորիզն էին կազմում: Ցավոք, ստիպված ենք այդ անանուն վարպետների մասին խոսելիս նրանց անվանել միայն իրենց իսկ նշանագրերով:

Վիմագրություն

Մրենի Կաթողիկե եկեղեցին վիմագրական հարուստ ժառանգություն է պահպանել: Արձանագրությունների առաջին, համեմատաբար ամբողջական հրատարակիչը Մխիթարյան միաբան Ներսես Սարգիսյանն էր¹⁴, ում հրատարակությունն օգտագործել են հետագա ուսումնասիրողները: Մի քանի լրացում է կատարել Ն. Մառը¹⁵, իսկ Հ. Օրբելին հնարավորինս ամբողջացրել է Մրենի արձանագրությունները, որոնք հրատարակվելու էին 1917 թ., սակայն տպագրությունն ընդհատվել է, ու այն լույս է տեսել 1974-ին՝ «Հայագիտական հետազոտություններ» ժողովածուի մեջ¹⁶: Այդ արձանագրությունների ուսում-

¹⁴ Ն. Մարգիսեան. նշվ. աշխ., էջ 196–200:

¹⁵ Н. Марр. նշվ. աշխ., էջ 81–90:

¹⁶ И. Орбели. Надписи Мрена. – Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 33–42:

նասիրությամբ զբաղվել, խմբագրման, լրացումներ են կատարել նաև Ղ. Ալիշանը¹⁷, Մ. (Ն.) Էմինը (ով դրանք թարգմանել է ռուսերեն)¹⁸, Կ. Սրապյանը¹⁹, Կ. Հովհանջանյանը²⁰, իսկ առանձին վիմագրերի անդրադարձել են Ա. Մանուչարյանը, Ս. Մնացականյանը, Ս. Ավագյանը և ուրիշներ²¹:

2012 թ. Ս. Կարապետյանը նախորդ հրատարակությունների վկայակոչմամբ, տեքստերի համեմատությամբ հրատարակել է Կաթողիկե եկեղեցու հարավային և արևմտյան որմերի թվով 14 արձանագրություն (որից 11-ը լուսանկարներով և գրչանկարներով), մեկ վիմագիր՝ հյուսիսային պատից, նաև գերեզմանոցի մի խաչքարի պատվանդանի, մատուռներից մեկի մուտքի և Սահմադինի ապարանքի մուտքի վերնամասի արձանագրություններ²²: Ցավոք, այս կարևոր հրատարակության մեջ, թերևս, պարզ վրիպման պատճառով, նկատի չի առնվել արձանագրությունների՝ Հ. Օրբելու վերոնշյալ հրատարակությունը²³:

Մրենի արձանագրությունները, անկասկած, պատմական, աղբյուրագիտական, հնագրական հսկայական նյութ են պարունակում՝ սկսած հիմնադրման մասին վկայող վիմագրից, որտեղ նշվում է, որ եկեղեցին կառուցվել է Հերակլ կայսեր 29 կամ 30-րդ տարում (639–640)՝ Հայոց իշխան Դավիթ Սահառունու կառավարման և Շիրակի ու Արշարունյաց տեր Ներսեհի տանուտերության ժամանակ՝ «Ի ԲԱՐԵՆՈՍՈՒԹԻՒՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԱՑ ԵՒ ՄՐԵՆՈՅ ԵՒ ԱՄԵՆ[ԱՅՆ ՀԱՅՈՅ]»²⁴:

¹⁷ Ղ. Ալիշան և Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 138–140, նույնի՝ Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 114:

¹⁸ Н. Э м и н. Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего. М., 1881, с. 72–74.

¹⁹ Մի տեղեկագիր Կարսի մարզի վերաբերյալ. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1970, թիվ 2, էջ 105–106:

²⁰ Կ. Յովհանջանյան և Գ. Ճանապարհորդական նկատողություններ Աղեքսանդրապոլից մինչև ի Մերեն, Վենետիկ, 1885, էջ 15–24:

²¹ Տե՛ս Ա. Մանուչարյան. Մրենի և Թալինի տաճարների շինարարական արձանագրությունները. – ՊԲՀ, 1966, - 1, էջ 247, Ս. Մնացականյան. Ե՛րբ է կառուցվել Մրենի տաճարը. – ՊԲՀ, 1969, - 3, էջ 161, Ս. Ավագյան. Վիմական արձանագրությունների բառաքնություն, Երևան, 1978, էջ 26, 156–157, 176–177:

²² Ս. Կարապետյան. նշվ. աշխ., էջ 55–63:

²³ Ներկայացնենք մի քանի տարրնթերցում. Ս. Կարապետյանի մոտ՝ 1041 թ. Գագիկ Բ-ի արձանագրության մեջ. «... իջուցի եւ զբազինի հացն ...», Հ. Օրբելու մոտ՝ «ԻԶՈՒՅԻ ԵՒ ԲԱԳՐՆԻ ՀԱՅՆ ...», այսինքն՝ խոսքը Բագարանի մասին է: Համապատասխանաբար՝ 1262 թ. Սահմադինի արձանագրության մեջ. «Ապադանին», և՛ «ԱՊԱՂԱ ՂԱՆԻՆ», Սահմադինի 1273 թ. վիմագրում. «... ազատեցի զս(ուր)բ ուխտին [Արջվ]ա.../ն այգիքն Մրենո» (արձանագրության վերջնամասը թերի է), և՛ «ԱԶԱՏԵՅԻ ԶՍՈՒՐԲ ՈՒԽՏՆ ԱՐԶՎԱ[ՐԶ]Ո/ ԱՅԳԻՔՆ ՄՐԵՆՈ» (արձանագրության վերջնամասն ամբողջական է), ոմն Իվանիկի արձանագրության վերջին բառերը Ս. Կարապետյանի մոտ բացակայում են, իսկ Հ. Օրբելու մոտ՝ «... ԱՆԽԱԲԱՆ: Թ[ՎԻՆ] ԶԿԹ» (1320), և այլն (տե՛ս Ս. Կարապետյան. նշվ. աշխ., էջ 56, 59, 62, Լ. Կոնյուր. նշվ. աշխ., էջ 36, 38, 39, 41):

²⁴ И. Орбели. նշվ. աշխ., էջ 35:

Արձանագրությունների հիմնական մասը վերաբերում է նվիրատվությունների կամ հարկեր թողնելուն: Հատկապես արժեքավոր են Աշոտ Գ Ողորմածի (953–977) դուստր Սուփիի, Վարդի որդի Դավթի (992 թ.) նվիրատվական արձանագրությունները, Գագիկ Ա-ի (989–1017) վիմագիր–հրամանը՝ մրենցիներին կոռից ազատելու («ազատեալ եմ զՄրենոյ զկոռն ...»), Գագիկ Բ-ի (1042–1045) հրամանը որոշ հարկեր թողնելու մասին, Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի (1221–1267) կանոնական արձանագրությունը (1251 թ.), Սահմադինի՝ հարկեր թողնելու (1273, 1284, 1288 թթ.) և Մրենում պալատ (դարպաս) կառուցելու մասին (1261 թ.) վիմագրերը²⁵:

2015-ին Մրեն կատարած գիտարշավի ժամանակ Ա. Ղազարյանն ուսումնասիրել, լուսանկարել է մի շարք արձանագրություններ, պատրաստել նաև դրանց մի մասի գրչանկարները: Դրանցից մի քանիսը փորագրված են որմերի վրա, իսկ երեք, համեմատաբար խոշոր արձանագրություն, ներկագիր են, որոնք գտնվում են եկեղեցու ներսում՝ որմնանկարի սվադի վրա:

Նախ ներկայացնենք երկու անտիպ վիմագրերը:

Գմբեթի թմբուկի հյուսիսարևմտյան նիստի ստորին մասում՝ անկյունաքարի վրա, բռնորգրով.

«Թվ. չծբ (1303) ծախեց
զԹալին. էս թվակկանիս առ
աք զՄրեն» (նկ. 13 ա, բ):

Լեզվից և գրչությունից դատելով՝ գրողը վիմագրությանը ոչ հմուտ մարդ է եղել²⁶: Ինչ վերաբերում է բովանդակությանը, ապա հայտնի է, որ մեծահարուստ Սահմադինը 1261 թ. գնել է Մրենը, ուստի մեկ ուրիշն էլ կարող էր այն գնել 1303 թվականին: Վիմագիրը ցայժմ անհայտ տվյալ է պարունակում նաև Թալինի պատմության վերաբերյալ:

Արձանագրության հատված, ներքին հյուսիսային պատի ստորին մասում՝ արևմտյան որմնասյան ձախ կողում.

«ԱՅՍ
ԻԲԵՆ» (նկ. 14 ա, բ):

Տառաձևերը հնագրական առումով բավական հնավանդ են, սակայն իմաստը չի հասկացվում, և պարզ չէ շարունակության հարցը:

²⁵ Ս. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 55–61:

²⁶ Բացի «թվականիս» բառի մեջ կ-ն կրկնելուց՝ նա Մրեն բառի վերջին երկու տառերն այնքան անհաջող է գրել, որ ջնջել է ու նորից ավելացրել «էն»:

Երկու այլ փոքր արձանագրություն, որոնք անվրեպ ընդօրինակությամբ հրատարակել է Հ. Օրբելին, ներկայացնում ենք լուսանկարով, գրչանկարով և մեկնաբանությամբ (դրանք բացակայում են մեծանուն գիտնականի մոտ):

Հյուսիսային պատի արևմտյան վերին մասում՝ միակտոր քարի վրա, կանոնավոր երկաթագրով գրված է.

«ՁԱԻՈՒՐՏ ՅԻ

ՇԵՅԷՔ ՄԸԵՆ

ՈՅ ԳԵՂՋԵՐԷՅ»²⁷ (նկ. 15 ա, բ):

Արձանագրության հնագրությունը համեմատելի է եկեղեցու շինարարական արձանագրության հետ, համենայն դեպս, երկու տեղում կրկնվող տառաձևերը նույնական են: Նկատի ունենալով նաև վիմագրի բարձրադիր տեղադրությունը՝ կարելի է այն համարել կառույցին ժամանակակից: Քանի որ շինարարական արձանագրության մեջ նշվում է, թե եկեղեցին կառուցվել է «ի բարեխոսություն Կամսարականաց եւ Մրենոյ...», կարելի է ենթադրել, որ ժամանակի քահանան՝ Մրենի երեցր, ցանկացել է իր անունն այս ձևով պատմությանը թողնել: Այն վիմագիր գրչի խոսքն է, որտեղ վերջին «Տ» տառը ցույց է տալիս ստացականություն, այսինքն՝ «ձեր Աւուրին՝ Մրենի գեղջերեցին հիշեք»: Հայոց մեզ գոյություն ունեցել է Աւուր անձնանունը (օր իմաստով), բայց ոչ այդ հնության²⁸:

Արձանագրության ավագ խորանի որմնամույթերի արևմտյան կողմում, մեկ տողով.

«Տ(Է)Ր ՄԻՐԴԱՏ Ի ԳՈԳՈՐԱՆ ... ՈՒՐԻԽ ՅԻՇԵՅԷՔ»²⁹ (նկ. 16 ա, բ, դ):

Տառաձևերը հնավանդ են, հնարավոր է վիմագիրը VII դարին է պատկանում: Ըստ տեղանունների բառարանի՝ Գոգորանը այժմ Սպիտակի մոտ գտնվող Գոգարան բնակավայրի անվանաձևն է³⁰:

²⁷ И. Орбели. Նշվ. աշխ., էջ 40: Հ. Օրբելին ԳԵՂՋ ԵՐԷՅ գրել է առանձին, սակայն գեղջերեց բառ գոյություն ունի (տե՛ս Նոր բառագիրք հայերեն լեզուի, կազմող՝ Միմոն Գաբամաճեան, Կ. Պոլիս, 1910, էջ 312): Արձանագրությունն առաջին անգամ, թերի ընթերցմամբ տեղ է գտել Կյուրեղ Մրապյանի ուղեգրության մեջ՝ «Ձաուրդ յիշեցեք Մրենոյ... գերեց» (Մի տեղեկագիր Կարսի մարզի վերաբերյալ, էջ 105, տե՛ս նաև Ս. Կարապետյան. նշվ. աշխ., էջ 60):

²⁸ Աւուր անվան ամենավաղ պահպանված օրինակը վկայված է 1483 թ. Ղափանի Արծվանիկ գյուղի գերեզմանատանը կանգնեցված խաչքարի վրա (Դիվան հայ վիմագրության, պր. 2, Երևան, 1960, էջ 136–137): Ավելի վաղ՝ 1217-ին, հիշատակվում է Խաչաւուր տարբերակ (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմ. Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 105):

²⁹ И. Орбели. Նշվ. աշխ., էջ 40: Առաջին հատվածը՝ թերի ընթերցմամբ, բերված է Կ. Հովհաննջանյանի գրքում (Կ. Յո վ հ ա ն ջ ա ն ե ա ն ց. նշվ. աշխ., էջ 16):

³⁰ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 929:

Ավելի հետաքրքրական են Մրենի ներկագիր արձանագրությունները: Դրանց մի մասը, որ ժամանակակից են կառույցին, բուն որմնանկարի վրա են ու վերաբերում են պատկերներին³¹: Որմնանկարին անդրադառնալով՝ պատկերներին կից արձանագրությունները հրատարակել է Քրիստինա Մարանչին: Գրություններ եղել են պատկերված առանձին մարդկային կերպարների մոտ, օրինակ՝ «ՓԻԼԻՊՈՍ», «ՄԱԹԷՈՍ», «ԹԱՏԷՈՍ» և այլն (հետաքրքիր է, որ այդ անունները փորագրված են սվադի վրա), ինչպես նաև բավական խոշորատառ մի ներկագիր արձանագրություն ավագ խորանի մեծ կամարի վրա, որի վերջին մասը լավ է պահպանվել, և որը քաղվածք է Մադոնայից՝ «[ՏԱՆ ՔՈՒՄ ՎԱՅԵԼ Է ՄԸ]ԲՈՒԹԻԻՆՆԻ ՏԷՐ, ԸՆՂ ԵՐԿԱՅՆ ԱԻՈՒՐՍ» (Մադ. 92, 5)³²: Այս արձանագրությունից Հ. Օրբելին կարդացել է միայն ԱԻՈՒՐՍ բառը³³: Ինչպես վերն ասվեց, հետաքրքիր զուգադիպությամբ Մրենի եկեղեցու կառուցման ժամանակի տեղի երեցն Աուր անունն է կրել: Արդյո՞ք նրա առաջարկությամբ չի ընտրվել Մադոնայի վերոնշյալ տողը:

Հարկ է նշել, որ բուն որմնանկարներին վերաբերող ներկագիր արձանագրություններ պահպանվել են նաև VII դարի հայկական այլ եկեղեցիներում (Արուճ, Կոշ, Թալին): Մակայն X–XI դարերից ի հայտ են գալիս նաև եկեղեցիների պատերը ծածկող սվադի վրա գրված նվիրատվական կամ այլ բնույթի արձանագրություններ, ինչպես, օրինակ, Հոռոմոսի վանքի Ս. Գևորգ եկեղեցու: Մրենի ստորև ներկայացվող արձանագրությունները վերաբերում են հարկեր թողնելուն, որոնք հրատարակել է Հ. Օրբելին³⁴:

Դրանցից հենց առաջինին՝ միայն վիմագրերում հանդիպող «ադման» բառի առնչությամբ, անդրադարձել է Ս. Ավագյանը՝ նշելով, որ «բառիս չորս վկայությունից միայն երկուսը կարելի է ստուգելի համարել՝ Անիի և Բջնիի, իսկ Մրենի և Խծկոնքի արձանագրությունների վերծանությունն անստուգելի է»³⁵՝ նկատի ունենալով դրանց լուսանկարների և գրչանկարների բացակայությունը: Այժմ, Մրենի դեպքում, այդ պակասը լրացվում է:

Արևմտյան պատի հյուսիսային որմնասյան վրա (10 տող).

³¹ Մրենի որմնանկարը վաղ միջնադարյան հայկական մոնումենտալ գեղանկարչության բացառիկ արժեքավոր հուշարձաններից է, որը, ցավոք, նախկինում, երբ ավելի լավ էր պահպանված, դուրս է մնացել հետագոտողների ուշադրությունից և ուսումնասիրվել է միայն վերջերս՝ Քրիստինա Մարանչիի ջանքերով: Հետաքրքրական է հատկապես, որ Մրենի որմնանկարի կենտրոնական պատկերը՝ պատվանդանի վրա կանգնած Քրիստոսը, նախատիպ է հանդիսացել Արուճի VII դարի 60-ականներին կառուցված Կաթողիկե եկեղեցու որմնանկարի համար: Արուճի որմնանկարի մասին տե՛ս Կ. Մաթևոսյան. *նշվ. աշխ.*, էջ 44–53:

³² C. Maranci. New Observations on the Frescoes at Mren, pp. 206–224.

³³ И. Орбели. *Նշվ. աշխ.*, էջ 40:

³⁴ Հ. Օրբելին ներկայացրել է չորս ներկագիր արձանագրություն, որոնցից ամենավնասավածը (32 տող է ունեցել) գրված կարմիր տողերի մեջ և դեռ այն ժամանակ գրեթե անընթեռնելի է եղել (տե՛ս նույն տեղում): Այժմ հազիվ նշմարվում է մի քանի տառ:

³⁵ Ս. Ավագյան. *նշվ. աշխ.*, էջ 26:

«+ ՅԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ԱՅՍ ԻՄ ՀՐԱՄԱՆՔ ԵՆ ՍՄԲԱՍԱ
 ՇԱՀԱՆՇԱՀԻ. ԱԶԱՏԵԱԼ ԵՄ ԶՄՐԵՆՈՅ ԶՈԶ
 ԽԱՐԻ ՀԱԿՆ ՎԱՍՆ ԻՄ ԱՐԵԻՈՅՍ ԵԻ ԻՄ ՄԵՂԱՅՆ Թ
 ՈՂՈՒԹԵԱՆ, ՈՐ ՉԿԱ ՈՉ ԻՆՉ ԱՂՄԱՆ ԲԱԳՐՆԷ ԵԻ
 ՈՉ ԱՆՈՅ Ի ՎԵՐԱ ՄՐԵՆՈՅ, ՎԱՍՆ ՈՉԽԱՐԻ: ԵԹԵ
 ՈՔ ԸՆԴԴԻՄԱՆԱ ՀՐԱՄԱՆԱՅ ԻՄՈՅ, ՅԻՄՈՅ
 ԿԱՍ ԱՅԼ ՈՔ ՈՎ ԻՅԷ, ՊԱՐՏԱԿԱՆ ԵՂԻՅԻ ՄՊԱՆ
 ՄԱՆ ԱՐԵԱՆՆ Ք(ՐԻՍՏՈՍ)Ի ԵԻ ԻՄ ՄԵՂԱՅՍ ԵԻ ԻՄ ԱՍԵՆ
 ԱՅՆ ԱԶԻ ՄԵՂԱՅ ՏԵՐ Է, ՅԺԸ [ՀԱՅՐԱՊԵՏ]
 ԱՅՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՅԻ ԵԻ ԴԱՏՈՂ ՆՈՐԱ [ՏԷՐ Է]»³⁶ (նկ. 17 ա, բ):

Բագրատունի Սմբատ Բ Տիեզերակալ (977–989) թագավորի գրեթե ամբողջական պահպանված հրամանագիր արձանագրությունն է՝ ոչխարի հարկի վերացման մասին: Ուշագրավ է, որ այստեղ այն բնութագրվում է ՀԱԿ բառով, իսկ նույն արձանագրության մոտ՝ Հովհաննես Սմբատ (1020–1041) թագավորի նույն խնդրին վերաբերող ներկագիր արձանագրության մեջ՝ ՀԱՍ, որոնք երկուսն էլ հարկ, հասույթ, տուրք իմաստն ունեն: Ինչ վերաբերում է «աղման» բառին, ապա այն օգտագործված է վեճ իմաստով, իսկ բառի ծագումը՝ Ս. Ավագյանը կապում է հայերեն աղմուկ արմատի հետ³⁷: Սմբատ Բ-ի հրամանագրում, փաստորեն, նախ նշվում է Մրենում ոչխարի հարկի վերացման մասին, ապա՝ զգուշացվում, որ Բագարանում կամ Անիում ոչ ոք այս կապակցությամբ վեճ չհարուցի (աղմուկ չբարձրացնի) Մրենի դեմ:

Հաջորդ երկու արձանագրությունները պատկանում են Հովհաննես Սմբատին: Առաջինում նա վերահաստատում է Սմբատ Բ-ի հրամանը, իսկ երկրորդն արդեն իր կատարած բարեգործությանն է վերաբերում: Հ. Օրբելու ժամանակ սրանք շատ քիչ էին վնասված, գրչանկարում փաստագրվում է այժմյան վիճակը:

Նախորդ ներկագիր արձանագրության տակ, ավելի խոշոր տառերով (6 տող, անավարտ).

«+ ԵԻ ԵՍ ՅՈՎԱՆՆԷՍ Շ[ԱՀԱՆՇԱ]
 Հ ՀԱՍՏԱՏԵԱԼ ԵՄ ԶԻՄ ՀԱՐ
 ԱՆՅՆ ՀՐԱՄԱՆՔՍ ՈՐ ՉԿԱՐԷ
 ՈՔ Ի ՄՐԵՆՈՅ ՈՉԽԱՐԷ ՈՉԻՆ
 Չ ՀԱԿԱՌՈՒԼ ԵԹԵ ՈՔ [ԸՆԴԴԻ

³⁶ Հմմտ. И. Орбели. Նշվ. աշխ., էջ 41: Հ. Օրբելու մոտ «ՈՉ ԻՆՉ ԱՂՄԱՆ ԲԱԳՐՆԷ ԵԻ ՈՉ ԱՆՈՅ» հաստատվում էր-ը բացակայում է: Նախավերջին տողում՝ բնագրում՝ ԱԶԻ, Հ. Օրբելին նշել է՝ ԱԶԳԻ:

³⁷ Ս. Ավագյան. նշվ. աշխ., էջ 26–27, 156–157:

ՄԱՆԱ ԻՄ ՀԱՐԱՆՑՆ ՀՐԱՄԱՆԱՅ]...³⁸ (նկ. 18 ա, բ):

Նախորդ արձանագրություններից ձախ՝ արևմտյան պատի կենտրոնական հատվածում (8 տող).

« [ԱՅՍ] ԻՄ ՀՐԱՄԱՆԱՔ ԵՆ ՅՈՎԱՆՆԻՄԻ
 [ՇԱՀԱՆՇԱՀԻ ԱԶԱ]ՏԵԼ ԵՄ ԶՄԸ
 [ԵՆՈՅ ՈՉԽԱԸԻ ՀԱ]ՍՆ ԵԻ ԶԱՓՆ Ե
 [Ի ՎԱՍՆ] ԻՄ ԱՐԵԻՈՅՍ ԵԻ Վ
 [ԱՍՆ ԻՄ ԱԶԳԻ] ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹԵԱՆ:
 ԵԻ ԹԵ Յ[ԵՏ] ԻՍՈՅ ԵԼԱՆԵԼՈՅ [ՅԱՇԽԱԸՀԷՍ]
 [Ա]ՅԼ ՈՔ ԸՆԴԴԻՄ[ԱՆԱՅ ՅԻՄՈ
 Յ ԿԱՍ ՅԱԻՏ]ԱԸԱՅ Ե...»³⁹ (նկ. 19 ա, բ):

Ինչպես տեսնում ենք, Հովհաննես Մսրատն առաջին արձանագրությամբ վավերացրել, թարմացրել է իր հորեղբոր՝ Մսրատ Բ-ի՝ Մրենում ոչխարի հարկը թողնելու մասին հրամանը, սակայն, ինչպես երևում է, դա բավարար չի համարվել, և նա մի հավելյալ հրամանագրով նորից է նույն արտոնությունը հաստատել Մրենի համար: Այս արձանագրությունները, անկասկած, արժեքավոր են միջնադարյան Հայաստանի տնտեսական պատմության տեսանկյունից:

Անփոփելով կարող ենք ասել, որ Մրենի Կաթողիկե եկեղեցին իր ճարտարապետական և շինարարական տեխնիկայի առանձնահատկություններով, ինքնատիպ վարպետանշաններով, բարձրարվեստ որմնանկարով ու հարուստ վիմագրերով հայ և համաշխարհային մշակույթի բացառիկ արժեք ներկայացնող հուշարձաններից է:

³⁸ И. Орбели. Նշվ. աշխ., էջ 41:

³⁹ Նույն տեղում:




Նկ. 1. Մրենի տաճարի ընդհանուր տեսքը հարավ - արևմուտքից



Նկ. 3. Մրենի տաճարի ներքին տեսքը դեպի արևմուտք



Նկ. 5. Գմբեթատակ անցումը, թմբուկն ու գմբեթը



Նկ. 2. Մրենի տաճարի հատակագիծը ըստ Թորոս Թորամանյանի չափագրության



Նկ. 4. Խորանի տակի թաղակապ սենյակը և կրաբետոնե պլատֆորմը



Նկ. 6. Թմբուկի արտաքին տեսքը



Նկ. 7. Շարվածքի հատված. երևում է անկյունային փորվածքով քար և վարպետի նշարագիր



Նկ. 8. Թմբուկի քիվը և գմբեթի վեղարի ստորին շարքի կղմինդրները



Նկ. 9. Հյուսիսարևմտյան լանջի ծածկույթների մնացորդները



ա)




բ)

գ)




Նկ. 10. ա-գ) Վարպետանշանների լուսանկարներ



Նկ. 11. Մրենի տաճարի վարպետանշանների աղյուսակ



Նկ. 12. Ամենաշատ քանակությամբ հանդիպող վարպետանշաններ




Նկ. 13. Թմբուկի հյուսիսարևմտյան նիստի անկյունաքարի արձանագրություն.
ա) լուսանկար, բ) գրչանկար



Նկ. 14. Արձանագրության հատված ներքին հյուսիսային պատի ստորին մասում.
ա) լուսանկար, բ) գրչանկար




Նկ. 15. Արձանագրություն հյուսիսային պատի արևմտյան վերին մասում.
ա) լուսանկար, բ) գրչանկար



Նկ. 16. Արձանագրություն ավագ խորանի հյուսիսային և հարավային որմնամույթերին.
ա, բ) լուսանկարներ, գ, դ) գրչանկարներ



Նկ. 17. Արձանագրություն արևմտյան պատի հյուսիսային որմնապան վրա, վերին մասում.
ա) լուսանկար, բ) գրչանկար



Նկ. 18. Արձանագրություն արևմտյան պատի հյուսիսային որմնապան վրա, ստորին մասում.
ա) լուսանկար, բ) գրչանկար



Նկ. 19. Արձանագրություն արևմտյան պատին, հյուսիսային որմնապանից ձախ.
ա) լուսանկար, բ) գրչանկար

СТРОИТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ, МЕТКИ МАСТЕРОВ И НЕКОТОРЫЕ НАДПИСИ
МРЕНСКОГО СОБОРА

АРМЕН КАЗАРЯН, КАРЕН МАТЕВОСЯН

Резюме

Соборная церковь в Мрене (639 г.) – один из наиболее значимых памятников как средневековой армянской архитектуры, так и мировой христианской культуры в целом. С 1920 года Мрен находится в Турции, в пограничной военной зоне, строго закрытой для посещений и недоступной для исследователей. В сентябре 2013 года в рамках программы «Ани в контексте» и в июне 2015 года с целью изучения состояния Мрена и принятия решений по предотвращению разрушения памятника были организованы две международные экспедиции (оба автора статьи были участниками первой из них, а А. Казарян – и второй). Часть собранного на месте материала демонстрирует некоторые особенности строительной техники Мренской церкви и впервые в полном объеме представляет существующие на стенах собора знаки мастеров-каменщиков.

FEATURES IN THE CONSTRUCTION TECHNIQUES, STONEMASONS' MARKS AND SOME
INSCRIPTIONS OF THE MREN CATHEDRAL

ARMEN GHAZARYAN, KAREN MATEVOSYAN

Summary

The Cathedral of Mren (639 A.D.) is not only one of the most important monuments of the medieval Armenian architecture, but also in the Christian culture of the world. Since 1920 Mren has been the part of modern Turkey, situated in a military zone, making it inaccessible for the scholars and visitors alike. In September of 2013, an international scientific expedition in the frames of the program “Ani in Context” was created. Later, in June of 2015 another expedition was created for evaluating the condition of the Mren Cathedral and for organizing its rescue from a complete collapse. (Both authors of this article participated in the first expedition. Armen Ghazaryan participated also in the second expedition). Part of the material collected on-site represents some of the significant characteristic aspects in the construction techniques of the Cathedral. For the first time ever, it also introduces the stonemasons' marks on the walls of the church.